Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՔԱՐԿՈԾՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՐԱՆԸ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐԸ ԴԱԴԻՎԱՆՔՈՒՄ

Արցախը հայ արուեստի ու մշակոյթի անսպառ գանձարան է սակայն, տարիներ առաջ, դժուար կը լինէր պատկերացնել, որ այստեղ է գտնուում նաեւ հայ որմնանկարչութեան եզակի ու հիասքանչ նմոյշներից մէկը՝ Դադիվանքի ԺԳ. դարի որմնանկարների շարքը։ Դադիվանքը Արցախի հետաքրքիր վանական համալիրներից է (նկար 1) *քաջ ծանօթ պատմամշակութային, գիտական աշխարհին ինչպէս նաեւ, զբօսաշրջիկութեան ասպարէզում։ Վանքի մասին կան շատ արժէքաւոր պատմական յիշատակութիւններ եւ արդի շրջանի ուսումնասիրութիւններ, աշխատութիւններ, գիտական յօդուածներ**։

---

* ՋԱԼԱԼԵԱՆՑ, Ս., *Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան*, մասն Բ., Տըփխիս 1858: ԷՓՐԻԿԵԱՆ, Ս. հ., *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, Ա., Վենետիկ 1903-05: ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, Թ., *Հայկական ճարտարապետութեան փոխազդեցութեան շուրջ*, Բ., Երեւան 1948: ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմութիւն Հայոց*, Երեւան 1961: ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ, Բ., *Դադի կամ Խութավանք*, ի *Էջմիածին*, 1971: Նոյն, *Խաչէնի իշխանութիւնը X-XVI դդ*, Երեւան 1985: ՄԿՐՏՉԵԱՆ, Շ., *Լեռնային դարաշրջանի պատմաճարտարապետական յուշարձանները*, «Հայաստան» հրտ., Երեւան 1985: DONABÉDIAN, P. - THIERRY, J.M., *Les arts Arméniens*, Mazenod, Paris 1987. AA. VV., *Gandzasar*, DAA, vol. 17, "Oemme" Edizioni, Milano 1987. AA. VV., *Gharabagh*, DAA, vol. 19, "Oemme" Edizioni, Milano 1988. DONABÉDIAN, P. - MUTAFIAN, C., *Artsakh, histoire du Karabagh*,Sevig press, Paris 1991: ՀԱՍՐԱԹԵԱՆ, Մ., *Հայկական ճարտարապետութեան Արցախի դպրոցը*, Երեւան, 1992: ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., *Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, RAA, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան 1999: ԱՅՎԱԶԵԱՆ, Ս., *Դադիվանքի հոգեւոր շինութիւնների կառուցման ժամանակագրական յաջորդականութիւնը*, ՀՀ ԳԱԱ, Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան 2006. 3 (173):



Նկար 1. Դադիվանք

Բարեբախտաբար, 1993 թուականի ազատագրումից յետոյ, այն աւելի խորն ուսումնասիրուել, պեղուել ու վերականգնուել է հայ մասնագէտների կողմից (ճարտ. Սամուէլ Այվազեան, հնագէտ Յակոբ Սիմոնեան եւ ուրիշներ)։ Մի կողմ թողնելով եկեղեցական ու հասարակական բնոյթի տարբեր շէնքերի վերականգնման բարդ ու պատասխանատու խնդիրը ու վանքային համալիրի կառոյցների ներկայիս իրավիճակը, մտադիր ենք անդրադառնալ համալիրի Ս. Աստուածածին կամ Կաթողիկէ եկեղեցու ներսում պահպանուած հրաշալի որմնանկարներին։ «Ճարտարապետութիւն ու Շինարարութիւն» *ամսագրում (հմ.* 11, Երեւան, *2013) լոյս է տեսել Դադիվանքի Կաթողիկէ եկեղեցու հարաւային պատին առկայ Սուրբ Նիկողայոս Հայրապետի թագադրութեան տեսարանը պատկերագրող որմնանկարի մաքրման, ամրակայման ու պահպանողական վերականգնման մասին մեր աշխատութիւնը։ Այժմ ներկայացնում ենք նոյն եկեղեցու հիւսիսային պատին պահպանուած Սուրբ Ստեփանոս Նախավկայի քարկոծութեան տեսարանը պատկերագրող որմնանկարի արժէքաւորման, ուսումնասիրութեան ու պահպանման նպատակով իրականացուած աշխատանքները, որոնք աւարտուել են անցեալ տարուայ Նոյեմբեր ամսին։*

A.R.@



Նկար 2. Կաթողիկէ Ս. Աստուածածանի հիւսիսային որմ

Տողերիս հեղինակը եւ որմնանկարի վերականգնման՝ ծագումով բելգիուհի եւ քառասուն տարի ի վեր Իտալիայում ապրող ու գործող մասնագէտ՝ Քրիստին Լամուղէի համագործակցութեամբ, 2015ի աշնանը, վերադարձանք Դաղիվանք սկսած աշ-

խատանքները աւարտին հասցնելու նպատակով։ Որմնանկարը տեղակայուած է Կաթողիկէ (1214) եկեղեցու հիւսիսային պատի արեւելակողմ վերին քիւի անկիւնում (Նկար 2)։ *Ինչպէս դիմացի պատի որմնանկարը, այս վերջինս, նոյնպէս շրջանակուած է դրսից կարմիր, հաստ իսկ ներսից բարակ, սպիտակ եզրագծով։ Մինչ աշխատանքների սկիզբը, մեծ դժուարութեամբ կարելի էր ենթադրել ու երեւակայել, պատի այս հատուածում, 1297 թուականին իրականացուած հրաշալի որմնանկարի գեղարուեստական արժէքը։ Այս որմնանկարը՝ (5քմ) շատ աւելի փոքր է Նիկողայոս Հայրապետի թագադրութեան տեսարանը պատկերագրող որմնանկարից (15քմ)։ Այն նոյնպէս պատուած էր մրի, ծխի, կեղտի, մոմավառութեան հետեւանքով առաջացած թանձր իւղային շերտից* (Նկար 3)։

Նկար 3. Հիւսիսային պատի արեւելակողմ



Նկար 4. Ս. Ստեփանոսի քարեր

Մաքրման աշխատանքները սկսելուց յետոյ, պարզուեց որմնանկարի նկարչական, գեղարուեստական ու յօրինուածքային մտայնութեան ու կատարման վարպետութեան մեծ արժէքը։ Հնարաւոր դարձաւ հաստատել, որ այս որմնանկարը նոյն նկարիչ

ստեղծագործող խմբի հերթական իրականացումն է քանզի, համընկնում է նկարչական ոճը, գոյների, երանգների ընտրութիւնը, գծանկարը, նկարչական հմտութիւնը, մանրամասների ելեէջները։ Սա հաստատւում է նաեւ այն հանգամանքով, որ այս որմնանկարի քարկոծողների խմբի կողմից օգտագործուող քարերի տեսակը, գոյնը, ձեւը տեսնում ենք նաեւ դիմացի պատի Ս. Նիկողայոս Հայրապետի թագադրութեան տեսարանը պատկերագրող որմնանկարի ստորին հատուածում՝ երկինքը եւ երկիրը բաժանող սպիտակաւուն, հորիզոնական գծից ներքեւ, գետնին շարուած (նկար 4, 5)։ *Նոյն հեղինակին պատկանելիութեան մէկ այլ ակնառու վկայութիւն է նաեւ նկարչական ոճը, որ պարզ երեւում է առաջին որմնանկարի Ս. Նիկողայոսի եւ երկրորդ որմնանկարի Յիսուս Քրիստոսի բաց ձեռքերի մանրամասները համեմատելով* (նկար 6, 7)։



Նկար 5. Ս. Նիկողայոսի ոտքերին գետնին շարուած քարեր

Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծութեան տեսարանը պատկերագրող որմնանկարի յօրինուածքային ելակէտը հետեւեալն է։ Կարմիր եզրագծով շրջանակուած տեսարանի խորքը բաժանուած է երկու մասի։ Ստորին՝ շագանակագոյն հատուածը պատկերագրում է երկիրը իսկ վերին, կապտաւուն հատուածը՝ երկինքը։ Ինչպէս դիմացի պատի որմնանկարում, այստեղ նոյնպէս երկրի եւ երկնքի սահմանը նշուած է սպիտակաւուն հորիզոնական եզրագծով։ Թեմատիկ յօրինուածքը քառախումբ է։ Ստորին ձախակողմում պատկերագրուած է քարկոծողների վեց հոգանոց խումբը, որի դիմաց կանգ-

նած է Ս. Ստեփանոս Նախավկան, որի աջ ձեռքին բուրվառն է իսկ ձախ ձեռքին սկիհը։ Քարկոծողների ձեռքերին կարմիր, կլոր քարերն են, որոնք նետուում են դէպի սուրբը։ Հետաքրքիր է նկատել, որ նետուած քարերի մի մասը ընկել է գետնին, միւսը՝ կախուել է օդում եւ հրաշքով արգելակուել այնպէս, որ չվնասեն Ս. Ստեփանոսին (նկար 8)։



Նկար 6.

Նկար 7.

Նկար 8

A.R.A.R.@

Նկար 9.

Նկար 10.

Նկար 11.

Քարկոծող խմբի դէմքերը քիչ արտայայտիչ են ու խիստ, բոլորի հայեացքը ուղղուած է դէպի ս. Ստեփանոսը։ Քարկոծողների հագին՝ մէկումէջ, կարմիր ու բաց գոյնի վերնազգեստ է, ոտքերին՝ սեւ գոյնի կրնկակօշիկ, գլխներին սլաքաձեւ գլխարկ (կարմիր զգեստի գլխին բաց եւ բաց զգեստի գլխին կարմիր գլխարկներ, նկար 9)։ *Որմնանկարի յօրինուածքի վերին հատուածում երկնային պատկերներ են, որոնց թւում՝ աջակողմում, Յիսուս Քրիստոսի պատկերն է մինչ ձախակողմում՝ չորս հրեշտակներն են։ Հրեշտակները քարկոծող խմբի վերեւում անմեղ եւ անզօր հետեւում են քարկոծութեան իսկ Յիսուս Քրիստոս գօտեպնդում է Ս. Ստեփանոսին։ Հրեշտակների խումբը թերեւս որմնանկարի ամենաարտայայտիչ մասն է։ Նրանց դէմքերը նուրբ են ու կանացի, թեւերը սլացիկ ու գունազարդ* (Նկար 10)։ *Հետաքրքիր է, որ ձախակողմեան հրեշտակի բացուած թեւը որմնանկարի կարմիր շրջանակի սահմաններից անց է կացել։ Հրեշտակների մարմինները ծածկուած են թափանցիկ եւ ծալքաւոր, նուրբ վերնազգեստով* (Նկար 11)։ *Որմնանկարի աջակողմը ամբողջովին վնասուել է քանզի այն եզրագծում է պատի անկիւնը, որտե-*

ղից, տարիներ շարունակ, անձրեւաջուրը հոսելով քայքայել է նաեւ սուաղը։ Ամէնից վատ պահպանուած պատկերը Յիսուս Քրիստոսինն է։ Ինչպէս Ս. Նիկողայոսի որմնանկարի դէպքում, այստեղ նոյնպէս, սպիտակաւուն որմնագիր հայատառ գրութիւն կայ։ Իւրաքանչիւր խմբի կողքին գրուած է պատկերուած անձանց անունը (քարկոծողներից բացի), նկարչական յօրինուածքի միջին մասում, զետեղուած է հետեւեալ քառատողը (Նկար 6).

ՏԵՍԷՔ ԶՀՈՂ
ԵՂԷՆ ԲՆՈՒԹԻ
ՍՆ ԻՄ ՁԱՐՁԱՐԵ[ԱԼ ՄԱՐ]
ՄՆՈՎ։

Նկար 13.

Նկար 14.

Որմնանկարի մաքրման, ամրակայման ու պահպանողական վերականգնման աշխատանքների աւարտին, Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծութեան տեսարանը պատկերագրող որմնանկարը վերադարձաւ իր նախնական հմայքին (Նկար 13)։ *Այն աւելի ընթեռնելի դարձնելու նպատակով, նպատակայարմար գտանք իրականացնել ժամանակաւոր լուսաւորութիւն* (Նկար 14)։ *Կաթողիկէ եկեղեցու ներսի բոլոր պատերին եւ արտաքին շքամուտքի մակերեսին, մեր կողմից իրականացուել են քարերի մաքրման ու ամրակայման*

A.R.A.R.@

աշխատանքներ, որի արդիւնքում եկեղեցին այժմ այցելուներին ներկայանում է լուսաւոր ու մաքուր ինչպէս վայել է քրիստոնեայ հայոց տաճարին։

ԱՐԱ ԶԱՐԵԱՆ

Riassunto

"LA LAPIDAZIONE DI SANTO STEFANO PROTOMARTIRE" NELLA CHIESA S. ASTVATZATZIN DEL COMPLESSO MONASTICO DI DADIVANK'

ARA ZARIAN

Il ciclo affrescato raffigurante "La lapidazione di Santo Stefano Protomartire" è disegnato all'interno della parete Nord nella chiesa S. Astvatzatzin, detta Kat'oghikè del Complesso Monastico di Dadivank', Repubblica del Gharabagh Montano – Artzakh, Provincia di Shahumian, a 32 km a Est dal capoluogo K'arvachar, a 1100 metri di altitudine. Il monastero fu fondato da san Dad, uno dei discepoli dell'apostolo Giuda Taddeo. La chiesa cupola fu costruita dalla principessa Arzù Khat'un, moglie del principe Vakht'ang, nel 1214. All'epoca il complesso era un centro spirituale particolarmente famoso e sede vescovile con numerosi edifici religiosi e ausiliari, posti su due livelli. Nelle pareti interne della Kat'oghikè, vi sono conservati affreschi del 1297 dislocati sulla parete Nord, Sud e nel paramento murario dell'altare principale. Nel 2014 è stato pulito, consolidato e restaurato l'affresco sulla parete Sud raffigurante "L'intronizzazione di San Nicola Taumaturgo", (vedi: *Architettura e Edilizia*, n. 11, Jerevan 2014). Nel 2015 l'affresco sulla parete Nord raffigurante "La lapidazione di Santo Stefano Protomartire" e il ciclo affrescato con motivi geometrici nel catino dell'altare maggiore. Al termine dei lavori di restauro è stata eseguita la pulitura di tutte le pareti interne e del portale della chiesa maggiore.

L'affresco sulla parete Nord si trovava in pessime condizioni, offuscato da un compatto strato di polvere, escrementi d'uccelli, grassi di paraffina di candele e fuliggine. La pulitura è stata eseguita con tamponi di acqua demineralizzata e soluzione leggermente basica. Sono state colmate le lacune dell'intonaco completate da velature di terre naturali. Dove necessario, si è proceduto al completamento pittorico. La composizione pittorica è ideata di quattro gruppi tematici: in basso a destra, la raffigurazione di S. Stefano che con il turibolo respinge le pietre lanciate; sulla sua sinistra, il gruppo di guerrieri che lanciano le pietre rosse; sopra, in alto a destra, la raffigurazione del Signore che rafforza l'anima di S. Stefano; in alto a sinistra, un gruppo di angeli che assistono incapaci alla scena della lapidazione. Il ciclo affrescato è decorato da testi in armeno di un'elegante squisitezza stilistica.

R.A.R.@